

ԳԻՒՂԱՑԻՆ

Դաշտերը ծածկուեց սպիտակ սաւանով,
Գիւղացին հաղիւ մտաւ ծածկի տակ.
Ամբողջ ամառը նա տանջուեց յուսով,
Որ ձմեռն ապրէ հանգիստ, անվաստակ.
Կերտծը չոր հաց, խմածը՝ սառ ջուր,
Շատ քիչ է տեսել նա տաք կերակուր.
Խոնաւ գետինն էր նորա անկողին
Նա սպասում էր ցանկալի օրին.—
Հինգ խալվար ցորեն կալից կ'ծախեմ,
Գարութերքովն էլ պարտքերս կ'տամ.
Աւելցած փողով հարսանիք կանեմ
Տղիս, աղջկանս, «ծաղը»*) կ'կանչեն.
Բայց ով տեղեակ է բնութեան խաղերին,
Նա չէ հաւատում այդ երազներին.
Մայիսին սաստիկ, մեծ կարկուտ տեղաց,
Խեղճի մուրազը փորումը մնաց.
Իսկ նա ինչ տարաւ իւր վար ու ցանքից
Եւ ինչ ստացաւ գարուց ու ցորնից.
Եկած բերքերը տուեց պարտքերին,
Տուն գնաց, դարդակ ջվալը ուսին.

*) Ծաղ կանչել. գիւղական սովորութիւն է, որ հարսնեքաւորները ընծայ են տալիս նորապսակներին ոսկու, արծաթեայ ամաններով և փողով, ըստ կարողութեան և պատուի:

Դարձեալ նորից պարտք, նոր ցորեն փոխ առ,
 Տուր մեծ վերադիր, մինչև գալող կալ.
 Այսպէս է ապրում թշուառ գիւղացին,
 Ամբողջ ձմեռը, ձեռները ծոցին,
 Բաղդաւոր է նա ով որ իւր տանից
 Մերմ ունի ցանած, բերած իւր կալից.
 Երջանիկ է նա, ով իւր գրանից
 Հարկն է վճարում. հարուստ ամենքից.
 Իսկ դու շատերի ապրուստը գիտես.
 Գիւղի բարեկամ, զնա ինքդ տես,
 Մարդիկ տգէտ են, տիրում է իւաւար,
 Մի դպրոց չկայ ողջ գիւղի համար.
 Արուեստանոցի տեղակ գինետուն.
 Այդ տունը բանդող, որջը, գիւղացուն.
 Չկայ գիւղական մի շաեմարան
 Նեղ օրուայ համար միակ յենարան,
 Իսկ բժշկական օգնութեան մասին
 Կարծես մտածող չկայ բնաւին.

 Այդպէս են գիւղեր, մեծ շէն և աւան,
 Այդպէս է ամբողջ գաւառն Ապարան:

Մ. ԽՆԳԻՔԱՐԵԱՆ

